

ՏՆՕՐԷՆ-ԽՄՔԱԳԻՐ


Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԲԱԿ ԿԱՐՈՐ ԵՆ Է ԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԱՆԻ ԱՌ  
ԽՈՒՐԱԳՐ. ԱՐՇԱՒԱՅՍ ԵՐԱԳՐԻ  
ԳԱՀԻՐԷ (ՀԱՎԱԳԱՅԻՆԷ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐՈՑՈՒՄ ՀԱՄԱՐ  
Տարեկան, ողջ զամիկն. 60  
Վեցամսեայ » 35  
ՕՏԱՐ ԵՐԿԵՐՆԵՐ  
Տարեկան Ֆրանկ 20  
Վեցամսեայ » 12

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐԻՆ ԿԱՆՆԻԿ Է  
ԵՒ ԹՂԹԱՏԱՑԻ ԵՄԱՔԸ  
ԽՈՒՐԱԳՐՈՒՔԻԱՆՈՒ ՎՐԱՅ:

ԽՈՒՐԱԳՐՈՒՔԻԱՆՈՒ ՈՒՂՂՈՒՄ  
ԳՐՈՒՔԻՆԸ ԵՒ ՆՆՈՒ ՏՐՈՒՔ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օրուան քաղաքական է՛ն կարեւոր դէպ-  
քըն է Մ. Տէլքասէի ի Բեդերայուրի ճամ-  
բորդութիւնը, որ զանազան մեկնութեանց  
տեղի տուաւ: Եւրոպական թերթեր այլընդ-  
այլոյ ենթագրութիւններ ըրին ու կ'ընեն  
յ՛արդ: Ոմանք Տրէյֆիւսի խնդիրը պատ-  
ճառ ցոյց տուին այդ յանկարծակի ճամ-  
բորդութեան, ուրիշներ պնդեցին թէ Գաղ-  
ղիոյ կողմնէ գէպ ի Գերմանիա մերձեց-  
ման մասին ցոյց տրուած փափաքն Ռու-  
սիոյ դիւրագգածութիւնը վրդոված է:  
Ուստի Գաղղիոյ արտաքին գործոց նախա-  
բարը պէտքն զգացեր է մինչև Ռուսիոյ ար-  
քունիքը երթալ և անձամբ հարկ եղած  
բացատրութիւնը տալ: Մինչև քիչ Գաղղի  
պէս լուրջ թերթ մը Փարիզի թղթակցէն  
ստանելով յայտարարեց թէ Մ. Տէլքասէ  
Բեդերայուրի գացած է Նիքոլա կայսրը  
համոզելու համար որ գահէն հրաժարելու  
որոշումէն ետ կենայ:

Սակայն Տէլքասէ ՚ի Բեդերայուրի Թանի  
թղթակցին տուած ունկնդրութեան միջո-  
ցին հերքած է բոլոր այդ զրոյցները՝ իբր  
բարբառնալիք: Եւ ըսած է թէ Գաղղիոյ  
և Ռուսիոյ միջև եղած յարաբերու-  
թիւնք երբեք այսքան ամբաստանող, այս-  
քան սերտ ու մտերմական չեն եղած և թէ  
Տրէյֆիւսի և այլ ներքին խնդիրները ո՛ր  
է առնչութիւն չունին բնաւ իւր ճամբոր-  
դութեան հետ: Փոխադարձ այցելութիւն  
մ՛է պարզապէս որ կ'ընեմ, ըսած է:

Տարակոյս չ'կայ թէ դիւանագիտական  
չրջանակներուն մէջ՝ քաղաքաւարական փո-  
խադարձ այցելութեանց միջոցին քաղաքա-  
կան փոխադարձ տեսութիւններ, և կարգա-  
գրութիւններ տեղի կ'ունենան: Ուստի յա-  
ռաջիկային քաղաքական նոր դէպքեր պի-  
տի գան պարզել հապճեպով եղած այդ  
ճամբորդութեան բուն շարժառիթն ու  
գաղտնիքը:

Այս միջոցիս Բէնի մէջ տեղի կ'ունե-  
նայ գարուս ամենէն սրտայոյզ ողբերգու-  
թեան մը վերջին արարուածը, որուն ու-  
շագրութիւն գարձուցած է ամբողջ քաղա-  
քական աշխարհը անձկալի հետաքրքրու-  
թեամբ: Տրէյֆիւսի դասն է այն, որ եր-  
կու տարիէ ի վեր բոլոր Ֆրանսան վերի

վայր յուզեց ու խռովեց:  
Չինուորականատեանը յառաջ կը տա-  
նի հարցաքննութիւնը, վկաները մի ըստ  
միովէ մտիկ կ'ընէ: Թէ որ անհատի մը ի-  
րաւունքը պաշտպանելու, գատական սխալ  
մը ուղղելով արդարութիւնը ի գործ դնելու  
վրայ ըլլար խնդիրը՝ դասին ունենալիք  
վախճանին վրայ ո՛ր և է տարակոյս չ'կար:  
Վասն զի մինչև ցարդ եղած յայտնու-  
թիւններէն և անաչառ քննութիւններէն ո՛չ  
միայն հաստատուած է թէ Տրէյֆիւսի գէմ  
դրական փաստեր չ'կան — պարզապէս մը որ  
բաւական է զինքը անպարտ արձակելու: —  
այլ ապացուցուած է թէ ուրիշ մ՛է այն  
համբաւաւոր ցուցակը պատրաստողը և  
գաղտնի տեղեկութիւններ հաղորդողը:  
Միով բանիւ այն խայտառակ էսթէրազին է  
միակայնցաւորը, կամ աւելի ճիշդը՝ գլխա-  
ւոր յանցապարտը: Ուստի Տրէյֆիւս՝ բանա-  
կին ուրիշ ո՛ր և է պատուաբար մէկ սպային  
պէս անմեղ է, և սպասուած պէս շատ աւելի  
անմեղ քան զինքը ամբաստանող ու գա-  
տապարտողները . . . .

Տրէյֆիւսի խնդիրը ուրեմն դատական  
անլուծանելի կնճիւ մը չունի, ընդհակա-  
ռակը խիստ պարզ է: Բայց այս գործին  
մէջ գեղարդաբար ուրիշ խնդիրներ կան:  
Նախ՝ ծանր պատասխանատուութիւնը բո-  
լոր անոնց, որոնք գիտակցաբար կամ յան-  
գէտս 1894ի դատական սխալը գործեցին:  
Յետոյ՝ միապետական կուսակցութիւնները  
և կղերական դասը իրենց քաղաքական  
գաղտնի նպատակները ի գլուխ հանելու  
համար հակահրէականութեան մէջ յուզումն  
և գրգռութիւնը վառ պահելու ազգու մի-  
ջոց մը ընտրած են սոյն խնդիրը: Միւս  
կողմէն՝ կոյր գաղտնիներէ մղուած ամբո-  
խին շովինականութիւնը՝ որ կը ցնցուի, կը  
պռտիկայ ի լուր սա յուզիչ խօսքին. քն-  
նակիւն պատճիւր:

Այդ դիւթական կամ դիւական — ինչ-  
պէս որ կ'ուզէք — երկու բառը չեմ գի-  
տեր ո՞ր դժսխային մտքին մէջ ճարտարո-  
ւէն յղացուած, գարբնուած՝ հրաշքի սուրի  
մը պէս Ֆրանսայի կողմ խրած կը տառա-  
պեցնէ զայն: Երկու տարիէ ի վեր Մեծն  
Գաղղիա երկունքէ բռնուած կը հեծէ ու կը  
տառապի:

Արդարեւ պէտք չէ հարձանցի կերպով  
դատել այդ երկու բառերուն զօրութիւնը:  
Ոչ ոք կրնայ երաշխաւորել թէ այդ խօսքը

(բանակին պատիւը) Բէնի զինուորական  
գատաւորներուն զգացմանցը և գատողու-  
թեանը վրայ ի՛նչ ազդեցութիւն պիտի ու-  
նենայ: Անչուչա անոնք ո՛րքան արի զին-  
ւորականներ, ա՛յնքան ալ պարկեշտ ու ա-  
նաչառ գատաւորներ են: Բայց կը վախցուի  
որ անոնք նախապաշարուած ըլլան այն սը-  
խալ գաղափարէն թէ իրենցմէ կ'սպասուի  
բանակին պատուոյն պահպանումն և վրէժ-  
խնդրութեան գործը: Մինչդեռ բանակին  
պատիւը բնաւ չէ արատաւորուած իւր մէկ  
կամ երկու անդամին գործած յանցան-  
քովը: Ընդհակառակը բանակը ա՛յն ատեն  
կ'անպատուուի, Ֆրանսա ա՛յն ատեն կ'ան-  
ուանարկի և իւր ազատամիտ-արդարասէրի  
համբաւը կ'արատաւորուի յաչս աշխարհի,  
երբ իւր պետերէն մի քանին կանխակալ  
մտածմամբ, ծիծաղելի նախապաշարուումով  
միանան և գործուած սխալը, չ'ըսենք ոճի-  
րը, ծածկելու պախարակելի յիմարութիւնը  
գործեն:

Մի անգամ ևս ցոյց տալու համար թէ  
մտքի մտրուումն ու նախապաշարում ի՛նչ-  
պիսի ծայրայեղ և գատապարտելի գաղա-  
փարներու կ'առաջնորդեն ամենէն պարկեշտ  
ճանչուած մարդն իսկ, բաւական է շատ  
մը օրինակներու մէջէն նշանուոր սպայի մը  
խօսքերը մէջ բերել, զոր այս առթիւ ուղ-  
ղած է վերջերս առ Պ. Ֆատանեար: Նա-  
մակագիրը կ'ըսէ. «Եթէ Տրէյֆիւս հաղար  
անգամ ալ անմեղ ըլլայ, իւր գեղարդու-  
թիւնը ո՛րքան ալ արգահատանքի արժա-  
նի ըլլայ, ի՛նչ արժէք ունի անհատի մը  
տարապարտ գեղարդութիւնը Ֆրանսայի  
փրկութեան առջեւ:» Եւ սա խօսքը. «Գա-  
ղղիոյ մէջ ամէն անոնք որ պարկեշտ են, ա-  
մէն անոնք որ անկեղծօրէն իրենց երկիրը  
կը սիրեն, պէտք չէ՞ որ մոռնան այդ թըշ-  
ուառականը, եթէ քրիստոնէայ ալ ըլլայ և  
մինչև իսկ անմեղ, և մի միայն հայրենի-  
քին վրայ մտածեն»:

Ինչ որ ամենէն աւելի զզուանք ու ար-  
գահատանք կը պատճառէ ա՛յն պարագան  
է, յորում իրաւունքի արդարութեան և  
մարդկային համերաշխութեան տարրական  
ծանօթութենէն անգիտացումն ու ողբալի  
կուրութիւնն է, որ ի յայտ կուգան այդ  
սխմար ու անոգսրոյն խօսքերէն:

Բարեբաղդաբար լուսաւորութեան վա-  
ռարաններէն մին եզոյ այդ երկրին մէջ  
վեհօգի ու ազատամիտ գաղափարներով

տողորում անձեր ստուար թիւ մը կը կազմեն, սակայն սա եւս անուրանալի է թէ ամբողջին, մանաւանդ բանակին մէջ շատերը յիշեալ սպային պէս կը խորհին, և պատրաստ են ամէն ինչ զոհել սխալ հասկըցում հայրենասիրութեան մը արտաւարակ զգացումին:

Արդ, ինչպէս կ'երեւի խնդիրը սակ անհատի մը իրաւունքին պաշտպանութեանը մէջ չկայանար, այլ սովորի պայքարն է արդարութեան՝ որ տեղի կ'ունենայ ընդդէմ բիրտ ուժին, ճշմարտութեան ոգորումն՝ ընդդէմ խաւարամիտ նենգութեան և ազատասենյ ընդվիզումն՝ ընդդէմ բռնունութեան:

ԳԻՏԱԿ

ՉԱՅՆ ՄԵ ԱՂԵՔԱՆԴՐԻԱՅԵՆ

Ինչպէս գիտէք, ամիսէ աւելի է որ Օրմանեանի անուան յիշատակութիւնը գաղթած է այս տեղ: Այդ անարժան Պատրիարքի վտարումը մեր եկեղեցիէն գործադրուեցաւ առանց լուրջ արգելքի կամ դժուարութեան: Տեղիս երիտասարդական զանազան խումբերը կրցան զերաւ իրար հասկընալ և միասնաբար ընդհանուր վերաբերեալ այս կէտին վրայ և ամէնքը մէկ ձայնի վերածուած պահանջեցին ու ձեռք բերին յիշատակութեան դադարումը: Արդէն այստեղի պահպանողական դասակարգն ալ քիչ շատ վարժուած ըլլալով փրահասակ Վոթովորդի կամքը՝ կոչուած ուժին նշանակութիւնը և կարեւորութիւնը, ու է լուրջ զբոսարարութիւն չի հանեց, երբ տեսաւ երիտասարդութեան ակնյայտի միաբանութիւնը:

Այս խնդրի մէջ Աղեքսանդրիոյ հայերուն ցոյց տուած գործնականութիւնը Գահիրէի ազգայինները թրեւս կարենային նկատել ազգային կեանքին մէջ իբր հազուադէպ երևոյթ մը, իբր բացառութիւն մը, և ըստ այնմ գուցէ չիորձուէին մղուիլ նմանօրինակ ձեռնարկի մը մէջ: Եթէ միաբանութեան և համարայնութեան այս օրինակը միայն Աղեքսանդրիայէն եկած ըլլար: Սակայն ընթերցողները քաջ պիտեն թէ նոյն երևոյթը Պուլկարիոյ և արտասահմանեան ուրիշ զանազան տեղերու հայերուն մէջ ալ ինքնին ի հանդէս եկած կամ քիչ մը աշխատութեամբ առաջ բերուած է:

Իսկ Գահիրէի հասարակութիւնը այսպիսի թեւազորի և քաջալերիչ օրինակներու գոյութեան վերջն ալ, սակաւին չկրցաւ մէջէն ելնել այս պարզ խնդրին որը ամիսէ մ'ի վեր ունի իր սուղեւ: Ամիսէ մ'ի վեր է արդարեւ օր չանցնիր, Գահիրէէն կ'ստանանք մէկ նոր լուր, երէկուանին հակասող, օրինակ, թէ այս ինչ խումբը յիշատակութեան դադարման համար այս ինչ ձեռնարկը բեր է, թէ՛ այն ինչ խումբը ընդհակառակը տարբեր միջոց մ'է ընտրած, թէ մէկ ուրիշ խումբ առջիններէն տարբեր ինքնուրոյն զերք մը բռնած է եւլն: Եւլն եւ այս ամէն իրար հակասող ձեռնարկներու և քայլափոխներու արդիւնքը եղած է լաբիւրինթոսական և քառասյին վիճակ մը: Մենք Աղեքսանդրիաբնակներս, թէպէտ միեւակ երեք չորս ժամու հեռաւորութեամբ բաժնուած ենք Գահիրէցիներէն, չենք կրնար հասկնալ թէ ինչո՞ւ այսպիսի պարզ և տարրական խնդիր մը — որը այնպիսի հանգամանք մ'ալ չունի որ սովորաբար զանազան կուսակցական կամ դասակարգային շահերու և նկատումներու իրարու բաղխումին — Գահիրէի մէջ ալ չ'ստանար այն արագ և գոհացուցիչ լուծումը՝ որը այս տեղ և ուրիշ տեղեր շատոնց ստացաւ: Ինչո՞ւ զանազան երիտասարդական շրջանակները չեն կրնար բողոքովն անպատուակ կերպով իրարու քով գալ և համաձայնիլ որոշ ուղղութեան մը վրայ, որ կարենար առաջ բերել ակնկալուած արդիւնքը:

Գահիրէի մէջ այս գործին այսպէս արտաբերաբար շարժուելը այստեղ շատ պէշ սպաւորութիւն մը կը թողու: Իսկ թէ ի՞նչ են այն պատճառները որ մասնաւոր կերպով մեր ուշադրութիւնը կը դարձնեն զէպի Գահիրէցիներու այս գործը, այդ զբոսարար չէ գուշակել:

Նախ իբր նոյն երկրի և նոյն առաջնորդական թեմի հասարակութիւն, բնականաբար փափաքելի և յարմար կը նկատենք որ այս պատրիարքական խնդրին մէջ երկու քաղաքներու վերաբերումը իրար չի հակասէ: Դարձեալ Գահիրէ ըլլալով մեր թեմին կեդրոնաւայրը, մեր այստեղ յարուցած և յս ողջուցած «Ձի յիշուի» խնդիրը մասամբ կրնայ իր նշանակութիւնը կորսնցնել, երբ հոգ Գահիրէի մէջ եկեղեցականութիւնը անվերջով և անարգել կերպով կարողանայ շարունակել ազգաբաւ Պատրիարքին անուան յիշատակութիւնը: Նաեւ այս ըստ երևութիւնի պարզ խնդիրը իր մէջ կը պարունակէ բարոյական կարգ մը նշանակութիւններ, որոնք անողուտ չեմ համարիր այստեղ համառօտի վերլուծել:

Արտասահմանի հայութիւնը, ինչպէս իր միջիններով նոյնպէս ներկային մէջ ալ այս «Ձի յիշուի» ցոյցերով կ'ապացուցանէ թէ ինք իրեն պարտք և միանգամայն իրաւունք կը համարի մտէն շահագրգռուիլ և ի հարկին միջամտել Տաճկաստանի իր հայրենակիցներուն վիճակին վերաբերեալ հարցերու: Բայց այս միջամտութիւնը այն ատեն կ'ունենայ որոշ նշանակութիւն երբ արտասահմանի բովանդակ հայութեան կողմէ տեղի ունենայ միաժամանակ և նմանօրինակ միջոցներով:

Արտասահմանի հայութիւնը գտնուելով ազատ երկիրներու մէջ, վայելելով մամուլի ազատութեան, կարծիքի ազատ փոխանակութեան բարեք, պէտք է այդ բարեքէն օգտուի՝ հայ ժողովուրդի ընդհանրութեան վերաբերեալ կենսական խնդիրները բազմակողմանի կերպով քննելու և լուսարանելու և անոնց հանդէպ ազգային միահամուռ քաղաքականութիւն մը բռնելու համար: Այդպիսի ազգային քաղաքականութեան առաջին փորձը և օրինակը եղաւ Լաճէի Վեհաժողովին զիմուսներ կատարելու ձեռնարկը: այդ ձեռնարկը առաւ ճշմարտագէտ համազգային կերպարանք, և այդպիսով ապացոյց մը հանդիսացաւ թէ՛ արտասահմանի մէջ ազգային ընդհանուր քաղաքականութեամբ մը գործելու գաղափարը անիրական չէ: Գոհունակութեամբ կը յիշենք թէ այդ զիմուսներու ընդհանուր գործին մէջ եզրուատմանակ հայութիւնն ալ ունեցաւ իր վայելուչ մասնակցութիւնը:

«Ձի յիշուի» խնդիրը միջիններու և զիմուսներու ձեռնարկին յաջորդ երկրորդ խնդիրն է և մասամբ ալ այդ առաջին ձեռնարկին մէկ հետեւութիւնը: Աստի և կ'սպասուի որ արտասահմանի հայութիւնը այս գործին մէջ ալ իր ձայնը միայնէ և գործէ միաժամանակ և միահամուռ: Ինքնայայտ է թէ միջինի կազմակերպող բոլոր հայ գաղութները յանուն իրենց արժանապատուութեան պահանջներն են անարժան Պատրիարքին զէմ կատարուող այս ցոյցին մասնակցելու:

Այս կէտի վրայ ալ գաղափարի միութիւնը արդէն գոյացած է: Կը մնայ միայն գործադրութեան ընդհանուր յաջողութիւնը: Գաղափարի միութեան իբր ապացոյց բաւական է մասնաինքն ընդ արտասահմանի մամուլին վերաբերումը Օրմանեանի անձին հանդէպ: Դրօսակ և Նոր կեանք, Երթում և Իրաւունք, Տիգրիս և Հայրենիք, Միութիւն և Արեւոյտ, ՂԱՌՄԻՆ և Անահիտ, — շատ կէտերու և խնդիրներու մէջ տարակարծիք թերթեր, — իրարու հետ կը դաշնակցին Օրմանեանի վատութիւնները պարտականու և անոր ճակտին գաղափարութեան սեւ կնիքը գործնելու գործին մէջ: Ու «չի յիշուի» հոտանք սկսելով վառնալէն, ծաւալելով Պուլկարիոյ զանազան քաղաքները, մէկ ոտու մով հասաւ Աղեքսանդրիա, սակէ ալ անցաւ Ատրանտանը, հասաւ Ամերիկա ուր հիմա օրուան հրատապ խնդիրն է: Ու սակաւին Գահիրէի երիտասարդութիւնը չի կրցաւ իր կամքը յարգել սալ:

Իրաւ, զէպերը ցոյց կուտան թէ Գահիրէի ժողովրդին մէջ ալ, ինչպէս ամէն տեղ, կայ հակապատրիարքեան խլրտում մը: Բայց կը թուի թէ երեւան եկած զժողովութիւնները պիւլ անցնելու վճռականութիւնը կը պակսի: ասոր ալ գլխաւոր պատճառներէն մէկը ըլլալ կը թուի երիտասարգութեան տարբեր ուղղութիւնը աշխատութիւնները՝ որոնք զժողովարար զիրար չէզոքայնելու են ծառայեր մինչև հիմա:

Միւս կողմէ Գահիրէի աղա դաս կարգը, կ'երեւի, տակաւին ինքզինքը ամբարշտական դարերու մէջ կը կարծէ և ըստ այնմ կը յանդգնի արհամարհել ժողովրդի կամքը:

Եկեղեցին թուղթ կը փակցուի, — աղաները ոտիկան կը բերեն՝ . . .

Չորս հարիւր ստորագրութեամբ պատճառաբանեալ հանրագրութիւն մը կը ներկայացուի. — անոնք՝ պատճառաբանութիւններու հայտնութեամբ և սպառնալիքով կը պատասխանեն՝ . . .

Ինչպէս կը տեսնէք, մենք այստեղ շատ հետաքրքրութեամբ կը հետեւինք իրար յաջորդող այս ամէն անցքերուն: Աւելի քան հետաքրքիր ենք տեսնելու թէ տեղւոր աղաներուն յանդգնութիւնը մինչև ո՞ր պիտի հասնի և թէ տեղւոր գաղափար երիտասարգութիւնը մինչև ո՞ր կէտը պիտի թուլատրէ այդ միջնադարեան գանկով ջոշերուն՝ իրենց ամբարշտական բռնակալութիւնը շարունակելու:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, ո՛չ Գահիրէի հայ երիտասարգութիւնը ո՛չ յիշեալ ամբարշտները պէտք չէ՛ մոտան թէ այսօրուան իրենց զէմ առ զէմ պայքարը միութեան մէջ չէ՛ որ տեղի կ'ունենայ: Դիտող աչքեր կան Այդ պիտող աչքերը բուրբերուն վրայէն նայող քառասուն դարերը չեն, այլ արտասահմանի հայութիւնն է, որ աչքերը անկած կը նայի զէպ ի բուրբերու ստորոտը: Արտասահմանի հայութեան միահամուռ քաղաքականութեան մաս կազմող այս «Ձի յիշուի» գործին հակառակորդներ և դժուարութիւն յարուցանողներ ո՛չ թէ լոկ իրենց քաղաքի վատընուեն երիտասարգութեան զայրոյթը կը հրաւիրեն իրենց վրայ, այլ արտասահմանի բողոք հայութեան զայրոյթը և արհամարհանքը:

Իսկ մենք հետեւէն զիտողներս, հակառակ անպատ երեւոյթներու, տարակոյտ չունինք որ՝ օր մը առաջ կամ օր մը վերջ՝ անպատճառ պիտի յողթանակէ ժողովրդի կամքը: Այո՛, կը հաւատանք թէ հանրագրութիւն ստորագրող 400 հայեր և անոնց հետ հասարակութեան ստուար մեծամասնութիւնը պիտի գիտնան իրենց կամքը յարգել տալ բուռ մը էֆէնտիններու որոնք, այսքան ջանջախիչ իրողութիւններէ վերջ ալ, տակաւին կը յանդգնին պաշտպանել Օրմանեանի պէս դաւաճան մը:

ԳԻՏԱԿ ՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Ազգ. Առաջնորդարանի Իրանապետին ստորագրութիւնը կրող նամակաւ մը կը խնդրուի մեզմէ հրատարակել հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը:

ՊԱՇՏՏՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Գաւառ. Վարչութեան Գաղ. Ժողովոյ Տարւոյս Յուլիս 28)9 Օգոստոսին պատգամաւորութեան մը կողմէ Ժողովիս ներկայացուած հանրագրի պարունակութիւնը ուշադրութեան առնուելէ յառաջ՝ հարկ դասուած է քննութիւն կատարել անոր ներքեւ դրուած ստորագրութեանց մասին:

Այդ քննութեամբ հաստատուած է թէ նոյն հանրագրի ներքեւ չ'կան բաւական թուով անուններ այն ազգայնոց, որ արձանագրուած են առաջնորդարանիս մարդահամարի տուեալներն մէջ, ընդհակառակն անոր ներքեւ կը տեսնուին՝

- 1. Առաջնորդարանիս իրաւասութեան չ'ըջանակին մէջ չ'գտնուող ազգայնոց, մինչև իսկ օտարազգիներու անուններ:
2. 17—20 տարեկան տղոց անուններ:
3. Խաչանիշներ, իբր ստորագրութիւն:
4. Մէկ անձի անուն երկու անգամ նշանակուած, անգամ մը ընտանիքին, անգամ մ'ալ հօրն անունով:
5. Միեւնոյն ձեռքով գրուած մէկէ աւելի անուններ:

6. Անընթեռնելի, աւրուած եւ միայն սկզբը նախադրուող անուններ:

7. Քահանայական դասուն անծանօթ անուններ: (\*)

ԿՅԻԲ

Ծ. Խ.—Պարոն Գիւանապետը, որ ինքզինք բաւական նբանկատ կը համարի եւ ուրիշ պարագաներու մէջ բծախնդիր է չընչին մանրամասնութեանց, պարտաւոր էր վերոյիշեալ եօթն հատուածներով անընդունելի նկատուած ստորագրութեանց քանակը իբր լրացուցիչ մաս նշանակել, մնացեալ ստորագրութեանց թիւը յստակ կերպով հասկցուելու համար:

Գարձեալ Պ. Գիւանապետը իբր ճշմարտութիւնը սիրող եւ հմուտ մէկը, ինչպէս ստէպ կը կոչէ ինքզինքն, պէտք էր որ ըստ իւր հին սովորութեան յիշեցնէր Պատ. Քաղ. Ժողովոյ թէ անհրաժեշտ է այդ քանակութեան նշանակուելը, ինչպէս անհրաժեշտ կը նկատէ իւր բռնած տետրերուն մէջ, թիւը, թուականը եւ համարը ինչ ինչ մանրամասնութեանց հետ:

Ա Ձ Դ

Գարտեան վարժարանի արձակուրդը կը լրանան եւ վարժարանի վերաբացումը տեղի կ'ունենայ յառաջիկայ երեքշաբթի 29 Օգոստոս:

Յ. Սեթեան

Տնօրէն Գարտ. վարժ.ի

Ն Ե Ր Շ Ն Ջ Ո Ւ Մ Ն Ե Ր

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 երեսներէ բաղկացած այս գրքոյ կը կարենակէ Պերճի (Մ. Տամատեան) հայրենասիրական ոտանաւորները:

Գիճճ Կ 5 լրուծ ուլջ

Կը գտնուի խմբագրութեանս քով:

Օտար երկիրներու մեր բաժանորդներն, իրենց բաժնեգիր կրնան մեզ հասցնել «Մանա-փոսթ»-ով մը ուղղեալ ա՛:

E. TOROSSIAN

DIRECTEUR-REDACTEUR DU JOURNAL "ARCHALOU 10E., LE CAIRE (Egypte)

Աղեքսանդրիոյ համար գործակալի մը պէտք ունինք, ստանձնել ուղղորդելն կը խնդրուի գրաւորապէս գիտել Արեւալոյսի խմբագրութեան:

Լրագրաց խմբագրութիւններէն կը խնդրուի փոխանակել իրենց թերթերն:

ՔԱՂՈՒԱԾ ՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ վերնագրոյն տակ Պ. Իււպէն Կոհիէ պզտիկ ուսումնասիրութիւն մ'ըրած է Auroreի 12րդ թիւոյն մէջ, զոր կը փութանք մեր ընթերցողաց ներկայացնել:

Լահէյի վեհաժողովը իւր աշխատութիւնները վերջացուց առանց բառ մ'իսկ արտասանելու գծադր հայերու մասին: Սակայն պատերազմի վտանգները իսպառ հեռացնելու եւ մշտական խաղաղութիւն մը ապահովելու համար, պէտք է նախ Օսմ. կայսրութեան մէջ տիրող անիշխանականութեան վերջ մը տալ, բռնակալ լուծին տակ ընկճուած ժողովրդոց օրինաւոր պահանջները:

(\*) Ժամուց չստուգներուն կ'ակնարկուի անշուշտ:

ներուն գնահատելի գոհացում մը տալով: Ամեն երկիր նմանօրինակ ճգնաժամներ եւ յուստիարարութիւններ ունեցած է, եւ վերջի վերջոյ յաղթական ելած է իր առջև ցրցուած գոհարարութիւններէն: Սակայն երբ դիտենք, կը տեսնենք թէ՛ քաղաքակիրթ աշխարհին մէկ ծայրէն միւսը, բարոյական մակարդակը իջած է: Ամերիկայի մէջ Ուաշինկթինի եւ ժէֆըրսոնի զաւակները մոռնալով 1776ի նշանաւոր յայտարարութիւնը, իրենց անկախութիւնը պաշտպանելու զոր մարդերը ծովահէն եւ ապստամբ կը նկատեն:

Գլխութեան եւ սիրոյ կրօնքի յաւանտա քահանայապետը, Հռոմայ Պապը, դանակին տակ հիծեծող Հայաստանի երեք հարիւր հազար քրիստոնէայներու ի նպաստ բառ մը չի գտաւ: Կաթոլիկ կղերն ալ կարմիր Սուլթանին դաւակից եղաւ հայ տարրին բնաջնջմանը համար: Կ'երեւի թէ ամբողջ մարդկութեան վրայ վատութեան եւ բարբարոսութեան հով մը կը փչէ:

Պէտք է սակայն որ այս ամբթները վերջանան:

Երբեք ֆէօզի մարդասպանը կը ջանայ այս վայրկենիս հայերուն մնացեալ բնկորները ոչնչացնել, ոճրագործի կատաղութենէն բռնուած: Ճիւղը անխորաբար կը յարձակի ամէն կրօնքներու եւ ցեղերու վերայ: Նահանգներուն մէջ գրական կերպով սով կը կազմակերպէ, եւ հանրային մտանդներուն մէջ գտնուած ցորենը կը գրաւէ վեցպատիկ գնով ծախելու համար: Հո՛ն, մարդիկը ուժասպառ կ'իյնան ճամբայներու մէջ, ուր զինեալ ուժ մը կը միջ զանոնք գէպ ի անստոյգ կեանք մը...: Կտոր մը հացի համար կիները իրենց եղկելի մարմինը թուրք եւ քիւրա ցահիճներուն կը յանձնեն: Քառասուն հազար լքուած որբեր ալ կը մեռնին եւ ջարդ, բռնարարութիւն ու հրդեհ վերստին կ'սկսին:

Արդ, այս ամէնը տեսնելով Եւրոպան չ'կրնար այլ եւս ո՛չ աչքերը գոցել եւ ո՛չ ականջները խցել Եւրոպան չ'կրնար այլևս չ'գիտնալ կեղծել: Կը տեսնէ, կը լսէ, գիտէ եւ անշարժ անպատուութեան մէջ կը թաղուի: Մինչդեռ մենք մեր քաղաքներուն մէջ ազատութիւն կը պարտինք եւ մեր քաղաքակրթութեան գեղեցիկութեանց վրայ կը ճառենք, մինչդեռ մեր կառավարութիւնները յանուն մարդասիրութեան ժողովներ կը գումարեն, անգին Հայաստանի մէջ դիտակները կը կուտակուին եւ սճիրներուն ամենասովորինները կը գործուին: Իսկ ո՛չ մենք եւ ո՛չ ալ մեր կառավարութիւնները կը մեղանան Պօլսոյ արխիախում գազանը մարդկային միտը կը պատուէ եւ կ'աղտոտէ, եւ մեր վեհապետներն ալ գեռ կը շարունակեն եղբայրաբար վարուել անոր հետ: Մեր դիւանագէտներն ու նախարարներն ալ կ'ընդունին պատուանշաններ, թանկագին նուէրներ եւ շահաւոր մենաշնորհներ:

Այս սոսկիտի տուամը երկար տեսեց:

Հայաստանի մէջ կենդանի մնացողները Եւրոպայէն ի՞նչ կը խնդրեն...

—Իրենց խոստումներուն գործադրութիւնը:

Եւրոպան Պէռլինի վեհաժողովին մէջ, Օսմանեան բարբարոս կառավարութիւնը քաղաքակիրթ երկրի մը կառավարութեան ձեւին վերածելու համար կարեւոր բարենորոգումներու գործադրութիւնը հանդիսաւոր կերպով խոստացաւ: Հիմա ժամանակն է գործելու: Ապա թէ ո՛չ ապագայ սերունդներուն համար Ապտ-իւլ-Համիտ մարգասպանին ոճիրները նուազ գարշելի պիտի թուին քան քաղաքակիրթ համարուած յաւակնոտ պետութեանց վատութիւնը:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ն Ն Ե Ր

ԳԱՀԻՐԷ, 17 Օգոստոս, 1899

Ամսոյս Յին շարժեալ երկրոյ դեռ Տեար Առնաւուտեանի ձայնը կը հնչէր Աղեքսանդրիոյ եկեղեցոյն մէջ: Իւր վերջին կրօնական փառաքն էր որ կը կատարէր, կամ աւելի ճիշդը, զրկեալի մը կուրծքէն արձակուած սրտատուջ վերջին սրբտունջն ու բողոք ընդդէմ անիրաւութեան: Այս բազմամեայ աշխատաւորը իր նման շատերուն պէս խեղճ ու չքաւոր մտաւ ամսոյս 11ին հինգշաբթի՝ առաւօտեան ժամն Յին, սո ալ թշուառ եւ յուսախար չուեց աստի: Երկար տարիներ տաք սրտով ազգին մանկուտոյն կրթութեան համար աշխատող այս ուսուցիչը ովանաններով բերուած էր Աղեքսանդրիա՝ տեղւոյն Հոգաբարձութեան կողմանէ: Սակայն մի տարի վերջը անձնական զազիր ու ստորաբար կը քերու եւ հաշիւներու գոհեցին զինքը անգործ եւ անսպուռտ լքանելով: Միշտ աչքիս առջեւն է ալեւոր Առնաւուտեանի հոգեկան վիշտը: Ի զուր կը հարցունէր վարժարանի Հոգաբարձութեան իւր հրաժարման շարժառիթը: Ի՞նչ կրնային պատասխանել որ օրինաւոր ըլլար Հոգաբարձութիւնը իւր նախկին մէկ անդամակցէն ունեցած վրէժն էր որ կը լուծէր վատակաւոր հայ վարժապետէն:

Իւր պաշտօնավարութեան երկար շրջանին մէջ շատ մեքենայութիւններու ակնատես եղող Առնաւուտեան կը հասկնայ թէ որո՞ւ գոհուած է:

Ալեւոր մանկավարժը կ'ըստիպուի ծխալաճառութեամբ եւ մսավաճառութեամբ զբաղել իր եւ իրեններուն օրապահիկը հայթայթելու համար: Կարծես մեր հայ վարժապետներուն ճակատագիրն է միշտ այսպէս տխուր վախճան մ'ունենալ: Իւր ամբողջ կեանքը վարժարանի սրահներուն մէջ անցունող ալեւոր ուսուցիչ մը կըրնար առեւտրական հրապարակին վրայ դիւրաւ յաջողի...: Որո՞ւ սիրտ չ'ուրբ գայրոյթով ի տես այսպիսի անխղճութեան: Ուրիշ մը գէ՛մ ունեցած ատելութիւննին յապեցունելու համար խեղճ յոգնավատակ ուսուցիչ մը պաշտօնէն զրկել եւ այդպէս թշուառութեան մասնակց՝ ամենէն մեծ ցածուրիւնեւ անխղճութիւնն է:

Առնաւուտեան իրեն եղած նիւթական ու բարոյական հարուածին չ'կրցաւ տոկալ. հարուածը ո՛րքան անագորոյն՝ վէրքն ալ ա՛յնքան սաստիկ եւ անբուժելի էր: Ի պրոցն եւ ուսանող մանկուտոյն նիւթապէս ու բարոյապէս իւր գոյութեան միակ անհրաժեշտ պէտքը դարձած էին, անտնցմէ զրկուած ապրիլ չկրցաւ...

Ազնիւ ու բարի Առնաւուտեան իրեն զրկանքներ ընողներուն անշուշտ ներած է իւր վերջին վայրկեանին: Ազատեցաւ նա. զինքը հալածողներն ալ հանգստացան անշուշտ, որոնք թերեւս խղճի խայթ մը կ'ունենային ամէն անգամ վինքը տեսնելուն...: Ս. Գ.

Ծ. Խ. Ինչպէս կ'երևի, նամակագիրը այդ օրերը Աղեքսանդրիա գտնուած է եւ ակնատես եղած հանգուցեալ Առնաւուտեանի վերջին ժամերուն. որովհետեւ իւր նամակը Գահիրէէն կ'ուղղէ մեզ:

ԱՐՇԱԼՈՅՍը ձեռքէ կը ծախուի Շարա Ապտ-իւլ-Ազիզի սկիզբը, Ճարմասի Օսմանիյէի քով ծխալաճառ Տիար ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՅԵԱՆԻ խանութը, հատը 20 փարայ ուլջ:

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի Գ Ա Ն Ի Ր Է

ՆՐԵՔ ԶԻՆՉԻ ԲԱԾՆՈՒԹՅ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՁԻ

Մանչևրու գրքոցը կը գտնուի Անգղիացոց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Մալք:

Աղջկանց եւ Մանկապարտիկի համար գատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Շարպալի, Տալուարի:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի Անգղիերէնի:

Մանկապարտէզի համար պատրաստ է մասնազատ եւ փորձառու վարժուելի մը եւ մանկապարտիկի վերջին մէթոսներով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Վարժարաններու բացումը տեղի պիտի ունենայ առաջիկայ Սեպտեմբեր 4ին:

Մանրամասնութեանց համար գիմնզ, Տիար Հաճի Փիլիպպոս Եպսկոպեանի ի Մէնչիլէ:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԳԱՀԻՐԷ, Ն. Բ. եւ Գ. Մ. — Ջեր նամակը սխալ տեղ ուղարկուած էր. պէտք էր Իրաւունքին ուղղել: Եթէ հասցէն չէք գիտեր կրնաք անոր տեղւոյս գործակալութիւնէն՝ որ ձեր բարեկամն է, տեղեկանալ:

ԳԱՀԻՐԷ, Գ. Մ. — Մենք թող կողմանք որ անիկայ իր սրտին մէջ հաւատարմութիւններ դուրս թափէ: Իր ուղած ձեւերով եւ գոյներով: Մինչեւ որ ժամանակը չ'գայ չենք խօսիր. կը խնդրինք որ դուք ալ միեւնոյն ընթացքը ունենաք զի պիտի պիտի գտնուի ու ստորին գաղափարներով մնած արարածները: Պէտք է արդարապէս այդպիսեաց վրայ ձեր նամակին եւ ազնիւ զգացմանց համար շնորհակալիք:

ՏԻԾԱՂՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱԾՈՅ

- Հայր մը իր որդւոյն.
- Ձե՛ս խափիւր, չե՛ս ամչնար, զա՛րեւի:
- Ի՛նչ կայ որ, հարիկ:
- Ի՛նչ պիտի ըլլայ. այս արուան առած վրկայականդ ալիկ չե, գե՛ ճօքեր առե՛ր ես, անպի՛նձա՛ն:
- Էյ ի՛նչ բնեմ. գրողը ես չեմ եւ, վարժապետս գրե՛ր է, իշա՛է, գիւս փե՛ս է, ինձի՛ ձգե՛ր ճե՛ սեանայի ինչ աղւոր կը գրեի:

Ձոխանց մը քիչ մը հիւանդանալով՝ բժիշկը կը կոչէ.  
 Բժիշկը բազկերակը բնեղին յետոյ, բերանիդ բացէ . . . ա՛. . . յետոյիդ գե՛ ե:  
 Փեան կամաց մը բժիշկին.  
 — Հիւանդ ըլլալիս չե՛ սօքթօր . . . :

ԱՄԻԱԿԱՆ ՀԱՅԻ ՓՈՒՌ

Շարա Մուհամեճ Ալի, Վիքորիա դեղարանի դեմ Մանասքըր փողոց քիւ 25

Մ. Թորոսեան, Կ. Բարունակեան եւ Ընկ. կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փոսին մէջ կը պատրաստուի անխարտախ ալիւրէ առիական թոնրի հաց եւ Լաւաւ:

Մարտողութիւնը անպայման կերպով զերաւցընող Ասիական այս պատրաստութիւնը շատ մը փափկաճաշակներու գոհունակութեան արժանացած է:

Անվիճելի կերպով միակը եւ անմրցելիս:

ՃՈՇԱԿԵՑՔԻ ԵՒ ՏԵՍԷՔ

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՅԵԱՆ

ՎԱՃԱՌՈՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

Ս Օ Ն Օ Վ Ի Ր Ա Յ

Գ.Ա.Հ.Ի.Ր.Է. — Մուսի փողոց, — Գ.Ա.Հ.Ի.Ր.Է. Ս. Եւ Ս. Սեւանովի վանառւստան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնաօլի ընտիր տեսակէ բանախելներու մեծ միջերք:

ԴԻՄԵՑԻՔ ԼՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանգազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանքային նախնախոր տեսակներէն զարդեղէններ, շորաքեր, օղիք, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՋԱՓԱՒՈՐ 5-50

ՏՕՔՓԷՐ ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ապրիլ, Շաբ Գուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակալներ:

Կը գաղթեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոսով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տոկոսնութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

Օգասուն եւ յարմարաւոր տեղ մը լաւ կահաւորեալ սրճարան մը կայ, որոյ տէրը մեկնուման պատճառաւ կ'ուզէ ծախել:

Հաստատուն գործ մը ունենալ փափաքողներն, թող գիմն Արշալոյսի խմբագրատունը, հարկ եղած մանրամասնութիւններուն տեղեկանալու համար:

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿՈՎԱՐ

Պապար Մուսուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւղէլիէն փոխադրած է ի Պապար Մուսուր: Ֆրանսական նորածուութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբը մինչեւ ցարդ գոհ ըրած է իրեն զիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկոսնութիւնն երբէք տարակոյս չ'վերցնէր:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, իթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նապր) ազատ մնալ:

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍՍՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստըզ) սեւ, չազանակազոյն եւ ոսկեզոյն: Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը գաղթեցնէ եւ մազերը կը ճոխայնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիւանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զրշող (2 ֆրանք):

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզիպտոսի մէջ միակը:

Ակուայի փոշի եւ ջուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք ուրոնց գիտու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակազրոյցները:

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.Հ.Ի.Ր.Է.

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրատիրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոտանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան, ճշգրտագրութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզիպտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ